ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 ապրիլի 2016 թվականի N 34-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2016թ. ապրիլի 1-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն համաձայնություն տալու մասին>> N241-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 68-2.2-32,68-3.1-(9-10), 68-3.1-16, 68-3.3-7, 68-4.2-9) անձնագրերը՝ համաձայն NN1-6 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N278-Ա և 2014թվականի մարտի 13-ի N32-Ա որոշումները:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

2016թ.ապրիլի 6
ք. Կապան